**Ամփոփ նյութ**

**«ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ ««ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՈՐՈՇՈՒՄ**
**23/01/2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/10ԾՕՀ-Ա**

**«ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել **տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև նախազգուշացում խախտումները վերացնելու, ապագայում նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու և Որոշմամբ նկարագրված միջոցառումներն իրականացնելու հանձնարարականներով:**
2. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով նախատեսված միջոցառումներն իրականացնելուց հետո առավելագույնը 5-օրյա ժամկետում իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնել Կենտրոնական բանկ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության լիազորված անձին սահմանված կարգով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է երկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**